

Ռուսլան Ա. Ցականյան
Պատմ. գիտ. թեկնածու

ԱՍՈՐԵՍՏԱՆԻ ԱՆԿՄԱՆ ԽՈՐԵՆԱՑՈՒ ԵՎ ՍԵՔԵՈՍԻ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ*

Բանալի բառեր – Փառնավագ, Ատրեստան, Բաբելոն, Ուրարտու, Հայկական լեռնաշխարհ, Մովսես Խորենացի, Մերետու, Ծոփք, Աղձնիք, Նաբուգոդոնոսոր II:

Մ. թ. ա. VII դարի վերջին քառորդում սկսված ասուրաբաբելոնյան հակամարտությունը շատ արագ վերածվեց ասուրական և հակասասուրական խմբավորումների միջև պայքարի՝ ընդգրկելով ամբողջ Մերձավոր Արևելքը՝ Հայկական լեռնաշխարհից մինչև Եգիպտոս ու արևելամիջերկրածովյան ավազանից մինչև Իրանական բարձրավանդակ: Մ. թ. ա. 626–610 թթ. ընթացքում բաբելացիներին հաջողվեց մեկը մյուսի հետևից գրավել ասուրական նահանգները, մ. թ. ա. 614 թ.՝ նախկին մայրաքաղաք Աշշուրը, ապա մ. թ. ա. 612 թ.՝ մայրաքաղաք Նինվեն և զավթել բուն Ատրեստանի ողջ տարածքը¹:

Նինվեի անկումից հետո ասուրական գործերի մնացուկները, ազնվականների ու վերջին արքա Աշշուր-ուբալիտ II-ի (մ.թ.ա. 612–607/605 թթ.) գլխավորությամբ քաշվելով Միջագետքի հյուսիս-արևմուտք, իրենց կենտրոնը դարձրին Խառան քաղաքն ու շարունակեցին պայքարը²: Հենց այս տարիներին էլ բաբելոնյան գործերը Նաբու-ապլա-ուծուր (Նաբոպալասար – Ռ. Ց.) (մ. թ. ա. 626–605 թթ.) արքայի գլխավորությամբ հայտնվեցին Հայկական լեռնաշխարհի սահմանամերձ գոտիներում:

Այս ժամանակահատվածի ուսումնասիրության համար մինչ օրս մեր ունեցած սկզբնաղբյուրները հիմնականում Նոր-բաբելոնյան «Ժամանակագրություններն»³ են,

*Հոդվածն ընդունվել է տպագրության 22.10.2017:

1 Մանրամասն տե՛ս **Ցականյան Ռ.**, Ասուրա-բաբելոնյան հակամարտությունը և Նաբոպալասարի Հյուսիսային արշավանքները, ՊԲՀ, 2011, № 1, էջ 262–264 [**Tsakanyan R.**, Assura-babelonyan hakamartut'yuny ev Nabopalsari Hyusisayin arshavank'nerə, PBH, 2011, № 1, pp. 262–264]; **նոյնի՛**՝ Նաբոպալասարի (Ք. ա. 626–605 թթ.) կառավարման 18-րդ տարին (BM 22047, 1–13) և «Bīt-mĪa-a-nu-ni-a»-ի տեղադրության հիմնախնդիրը, Միջագետքի գիտաժողովի նյութեր, Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտ, Վանաձոր, 2012, էջ 16–17 [ibid: Nabopalsari (K'. a. 626–605 t't.) karavarman 18-rd tarin (BM 22047, 1–13) ev «Bīt-mĪa-a-nu-ni-a»-i teğadrut'yan himnaxndirə, Mijazgayin gitažoğovi nyut'er, Vanadzori petakan mankavaržakan institut, Vanadzor, 2012, pp. 16–17]:

2 Տե՛ս **Ցականյան Ռ.**, Ասուրա-բաբելոնյան հակամարտությունը ..., էջ 265 [**Tsakanyan R.**, Assura-babelonyan hakamartutyuny ..., p. 265]:

3 Տե՛ս **Gadd C. J.**, The Fall of Nineveh: The Newly Discovered Babylonian Chronicle № 21.901 in the British Museum, with Photographie Reproduction and Six Plates, London, 1923, pp. 1–42, pls. I–VI; **Wiseman D. J.**, Chronicles of Chaldean Kings (626–556 B.C.) in the British Museum, London, 1956, pp. 11–23, 44ff., 54–56; **Grayson A. K.**, Assyrian and Babylonian Chronicles (այսուհետ՝ ABC), New York, 1975, Chron. 3; 4; **Glassner J.-J.**, Mesopotamian Chronicles (այսուհետ՝ GMC), Atlanta, 2004, Chron. 22; 23; **Zawadzki S.**, The Fall of Assyria and Median-Babylonian Relations in Light of the Napopolassar Chronicle, Poznan, 1988, p. 114ff.

որոնք լրացվում են անտիկ ու միջնադարյան հայ պատմիչների երկերով: Այս աղբյուրներից է, որ մենք պատկերացում ենք կազմում, թե ռազմական գործողությունների ընթացքի ու ընդգրկման և թե նրանում ներառված պետությունների ու ժողովուրդների մասին: Եվ եթե առաջինի պարագայում մենք որպես հականարտող կողմ ունենք մի կողմից եգիպտաասորական խմբավորումն ընդդեմ բարեխոսման արականի, ապա երկրորդի պարագայում մասնակիցների աշխարհագրական սահմանն ընդլայնվում է, և այս կամ այն կերպ հականարտությանը մասնակցում են հրեաները, Արևելամիջերկրածովյան ավազանի երկրները⁴, սկյութները⁵, հայերը⁶ և այլք:

1. Բարեխոսական գործերի արշավանքները դեպի Հայկական լեռնաշխարհ

Ըստ նորբաբելոնյան «Ժամանակագրության»՝ Նաբու-ապլա-ուծուրի կառավարման 17-րդ տարում՝ մ. թ. ա. 609 թ., ասորեստանցիներին օգնության է շտապում Եգիպտոսի փարավոն Նեխտ II-ը (Վահեմիբռա) (մ. թ. ա. 610-595 թթ.) և միավորվելով Աշշուր-ուբալլիտ II-ի հետ՝ ասորաեգիպտական ուժերին առաջնորդում է դեպի Խառան:

Այս իրադարձության կապակցությամբ խորհրդային մասնագիտական գրականության, և հայ պատմագրության մեջ ժամանակին տիրող էր Ի. Մ. Դյակոնովի այն կարծիքը, որ Նաբու-ապլա-ուծուրի հետ միաժամանակ արշավանքի են դուրս եկել նաև մարերն ու նվաճել Ուրարտուն⁷:

Այլ բան են վկայում, սակայն, նորբաբելոնյան «Ժամանակագրության» 70-75-րդ տողերում առկա տեղեկությունները, որոնց համաձայն.

«70. LUGAL URI.KI ana re-šu-ut ÉRIN.ME-šú DU-ma x [. . . ana KUR.]T¹-za-al-la i-li-ma

71. URU.MEšá KUR.ME ma-a-du-t[ú] x [. . .] x-šú-nu¹ ina IZI iš-ru-up

72. ina UD-mi- šú-ma ÉRIN.ME [šá⁸ . . .] EN pi-ḫat URU.Ú-ra-áš-tu

73. D¹U ina KUR(?) x[. . .]ME-šú-nu iḫ-tab-tu

74. [š]u-lu-tu šá LUGAL [. . . ina ŠÁ-šú ú-še-lu it-ta-as]- ḫu-nim-ma

75. ana UR[U . . .] i-lu-ú¹ [. . .]x LUGAL URI.KI ana KUR-šú GUR-ra»

«Աքքադի արքան իր զորքերին օգնության շտապեց և ... [...] բարձրացավ դեպի Իզալա (և) բազմաթիվ լեռնային քաղաքներ ... [...] հրի մատնեց նրանց [...]: Այդ ժամանակ (այդ օրերին) [...] զորքերը մինչև Ուրաշտուի շրջան [շա]րժվեցին Երկրում(?) ... [...] թալանեց նրանց: Կայազորը, որ արքան [... նրանց մեջ(?) կանգնեցրեց՝ տեղահախնեցին (և) [...] բարձրացան ... (?) քաղաք]: Աքքադի արքան իր երկիրը վերադարձավ»⁹:

4 Տե՛ս **Հերոդոտոս**, Պատմություն ինը գրքից, թարգմ. բնագր. և ծանոթագր.՝ Մ. Կրկյաշարյանի, Եր., 1986, II, 159 [Herodotos, Patmut'ywn inə grk'ic, targm. bnagr. ev canotagr.՝ S. Krkyasharyani, Y., 1988, II, 159]; **Иосиф Флавий**, Иудейские древности, в 2-х томах, пер. Г. Гипкеля, Москва, 1996, X, 5 [Yosif Flaviy, Yudeyskie drevnosti, v 2-kh tomakh, per. G. Gipkelya, Moskva, 1996, X, 5]:

5 Տե՛ս **Դիոդորոս Սիկիլացի**, Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, № 14, թարգմ. Մ. Կրկյաշարյանի, Եր., 1985, I, 43 [Diodoros Sikilaci, Otar agbywrnerə Hayastani ev hayeri masin, № 14, t'argm. S. Krkyasharyani, Y., 1985, II, 43]:

6 Տե՛ս **Մուսիսի Խորենացվոյ** Պատմություն Հայոց, աշխատութեամբ՝ Մ. Աբելյանի և Մ. Հարությունյանի, Տիֆլիս, 1913, I, ԻԱ, էջ 65 [Movsisi Xorenacvo Patmut'ywn Hayoc, Ašxatut'eamb՝ M. Abeğyani ev S. Harwt'ywnyani, Tr'gis, 1913, I, IA, p. 65]:

7 Տե՛ս **Дьяконов И. М.**, Малая Азия и Армения около 600 г. до н.э. и северные походы вавилонских царей, «Вестник древней истории», 1981, № 2, с. 42 [D'yakonov I. M., Malaya Aziya i Armeniya okolo 600 g. do n. e. i severnyye pokhody vavilonskikh tsarey, Vestnik drevney istorii, 1981, № 2, p. 42]; **Յականյան Ռ.**, Ասուրա-բաբելոնյան հականարտությունը ..., էջ 265-266 և ծնթ. 18 [Tsakanyan R., Assura-babelonyan hakamartwt'ywnə p. 265-266 ev not. 18]:

8 Վերականգնումը՝ Ջ.-Ջ. Գլասսների՝ GMC, p. 224, Chron. 22, I. 72.

9 Gadd C. J., The Fall of Nineveh, p. 36, I. 74; Wiseman D. J., Chronicles of Chaldean Kings, p. 20ff., 46, 64ff.; ABC, Chron. 4; GMC, Chron. 23; Дьяконов И. М., Малая Азия и Армения ... с. 39-46 [D'yakonov I.

Ըստ արձանագրության՝ Նաբու–ապլա–ուծուրը մեկնել էր պաշարված Խառանին օգնության, իսկ քիչ հետո մարտեր էր մղում Հայկական լեռնաշխարհի մատույցներում՝ Իզալլայի լեռներում: Այստեղ բազմաթիվ քաղաքներ գրավելուց հետո, ըստ արձանագրության 72–րդ տողի, ինչ–որ գորքեր, ըստ համատեքստի՝ բաբելոնյան, այլ ոչ մարական, ինչպես ենթադրում է Ի. Մ. Դյակոնովը, հասնում են «**դէպի Ուրաշ(ր)տուի շրջան**»՝ («**adi piḫat URU.Úraštu**»):

Այստեղ մենք շարունակում ենք հետամուտ լինել մեր այն կարծիքին, որ թշնամին, որի հետ Իզալլայում բախվել է Նաբու–ապլա–ուծուրը, ասորեստանցիները չէին. իրենց բուն տարածքը կորցրած և քաղաքական հոգեվարքի մեջ հայտնված ասորեստանցիները հազիվ թե իրենց ռազմուծի վերջին մնացորդները հեռացնեին դաշնակից եգիպտացիների պաշտպանությունից և նետեին քանակապես ու բարոյահոգեբանական առումով գերազանցող հակառակորդի դեմ¹⁰:

Ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ ըստ Ի. Մ. Դյակոնովի՝ Նաբու–ապլա–ուծուրի արշավանքը Խառանից հյուսիս կարող էր պայմանավորված լինել նաև հումքի պաշարներ ձեռք բերելու անհրաժեշտությամբ¹¹: Ինչ խոսք, այս մեկնաբանությունն այնքան էլ հարիր չէ պատերազմական բուռն ժամանակաշրջանին և հետևաբար հազիվ թե կարելի է հիմնավոր համարել: Այդուհանդերձ, անվանի արևելագետը նկատում է, որ Իզալլայի լեռներում Նաբու–ապլա–ուծուրը հանդիպել է համառ դիմադրության: Ընդ որում՝ դիմադրողները ո՛չ ասորեստանցիները, ո՛չ եգիպտացիները, ո՛չ էլ ուրարտացիներն են եղել, այլ ինչ–որ անհայտ մի ուժ, որն ասուրաբաբելական հակամարտության շրջանում փորձել է ընդլայնել իր տարածքը:

Աղբյուրների սակավության պատճառով առայժմ անհնարին է քիչ թե շատ հիմնավոր դատողություն անել Եփրատի վերին ավազանում հաստատված այդ քաղաքական գործոնի էթնոքաղաքական պատկանելության խնդրի վերաբերյալ: Սակայն միաժամանակ հաշվի առնելով նախորդ տասնամյակներում տարածաշրջանում տեղի ունեցած էթնոքաղաքական բուռն տեղաշարժերը՝ կարելի է ենթադրել, որ այստեղ գործ ունենք «Տուն Թորգոմայի» կամ նրա քաղաքական փոխակերպության հետ¹²: Ամեն դեպքում, բոլոր եզրակացությունները շարունակում են մնալ ենթադրությունների դաշտում:

Ինչևէ, Նաբու–ապլա–ուծուրի կառավարման 18–րդ տարում՝ մ. թ. ա. 608 թ., բաբելական գորքերը գահաժառանգ Նաբու–կուդուրի–ուծուրի գլխավորությամբ նոր արշավի ելան: Ռազմական գործողությունները ծավալվեցին Հայկական լեռնաշխարհի հարավարևմտյան տարածքներում՝ Բիթ–Խանունիայի լեռներում: Նաբու–ապլա–ուծուրի կառավարման 18–րդ տարվա արշավանքի համապատասխան տողերը մեջբերում

M., Malaya Aziya i Armeniya ... pp. 39–46]; **Ցականյան Ռ.**, Ասուրա–բաբելոնյան հակամարտությունը..., էջ 266–269 [Tsakanyan R., Assura–babelonyan hakamartut'wny ..., ej 266–269]; **Նույնի**՝ Նաբոպալասարի (Ք. ա. 626–605 թթ.) կառավարման 18–րդ տարին..., էջ 17 [ibid: Naboplasari (Q.a. 626–605tt.) karavarman 18–rd tarin ..., p. 17]:

10 Տե՛ս **Ցականյան Ռ.**, Ասուրա–բաբելոնյան հակամարտությունը ..., էջ 268–269 [Tsakanyan R., Assura–babelonyan hakamartutyuny ..., pp. 268–269]:

11 Տե՛ս **Дьяконов И. М.**, Малая Азия и Армения ... с. 41–43 [D'yakonov I. M., Malaya Aziya i Armeniya ... s. 41–43]:

12 Մանրամասն տե՛ս **Քոսյան Ա.**, Տուն Թորգոմայ (ամասպել և իրականություն), Եր., 1998, էջ 55–65 [K'osyan A., Tun T'orgoma (araspel ev irakanut'ywn), Yr., 1998, pp. 55–65]; **Ցականյան Ռ.**, «Տուն Թորգոմայ»-ն սկզբնաղբյուրներում, Արևելագիտությունը Հայաստանում, հատ. 3: Հին և միջնադարյան Հայաստանը և իր հարևանները (Ժողովածուն նվիրվում է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գազիկ Սարգսյանի ծննդյան 90–ամյակին), 2017, էջ 161–180 [Tsakanyan R., «Tun T'orgoma»-n skzbnaxbyurnerum, Arevelagitut'yunə Hayastanum, h. 3, Hin ev Mijnadaryan Hayastany ev ir harevannerə (žoxovac'un nvirvwm é HH GAA akademikos Gagik Sargsyani c'nnayan 90–amyakin), 2017, ej 161–180]; **Քոսյան Ա.**, Արամ նահապետը Կապադովկիայում (Մի վարկածի առթիվ), ՊԲՀ, 1999, № 1–2, էջ 237–259 [K'osyan A., Aram nahapetə Kapadovkiaywm (Mi varkac'i artiv), PBH, 1999, № 1–2, pp. 237–259]; **Ցականյան Ռ.**, Ասուրա–բաբելոնյան հակամարտությունը..., էջ 266–269 [Tsakanyan R., Assura–babelonyan hakamartutyunə ..., ej 266–269]; **Նույնի**՝ Նաբոպալասարի (Ք. ա. 626–605 թթ.) կառավարման 18–րդ տարին..., էջ 17 [ibid: Naboplasari (Q.a. 626–605tt.) karavarman 18–rd tarin ..., p. 17]:

ենք ամբողջությամբ՝

- «1. MU.18.KAM^dAG.IBIL.ŠEŠ¹³ ina ITI.KIN¹⁴ LUGAL URI.KI ÉRIN.ME-šú id-ke-e-ma
2. GÚ ID.IDIGNA (m^aIdiqlat) UŠ-ma ana KURⁱ šá É-ĪĪa-a-nu-ni-ia
3. pi-ġat KUR.Ú-ra-šš-ṭu i-li-ma URU.ME ina IZI ʾiš-ru-up¹

4. ġu-bu-ut-su-nu ma-diš iġ-tab-ta ina ITI.LAB LUGAL URI.KI ana KUR-šú ʾGUR-ra¹»

«(1-4) Նաբու-ապլա-ուծուրի տասնութերորդ տարին, էլուլ ամսին՝ Աքքադի արքան իր զորքերը հավաքագրեց և Տիգրիսի երկայնքով շարժվեց դեպի Բիթ-Խանունիայի լեռները՝ Ուրաշտուի երկրի շրջանում: Քաղաքները հրի մատնեց (և) մեծ քանակությամբ ավար գավթեց...»¹⁵:

Ինչպես նախորդ արձանագրության մեջ, այնպես էլ այստեղ որևէ խոսք չկա բաբելացիների կողմից տարածքային նվաճման մասին: Ինչպես երևում է, այս անգամ էլ բաբելացիները, մի քանի քաղաք հրի մատնելով և ռազմագերիներ ձեռք բերելով, հետ են վերադառնում:

Այստեղ կրկնությունից խուսափելու համար չենք անդրադառնա Բիթ-Խանունիայի տեղադրության մանրամասնություններին, այլ նշենք, որ այն կարծես թե հաստատապես տեղորոշվում է Իզալլայից հյուսիս կամ հյուսիս-արևմուտք՝ համապատասխանելով «Աշխարհացույցյան» Աղծնիք նահանգի Անգեղտուն կամ որևէ այլ գավառի¹⁶: Այս դեպքում նույնպես հայտնի չէ Բիթ-Խանունիայում բաբելացիներին դիմադրություն ցույց տված հանրույթի էթնիկական պատկանելությունը: Սակայն փոխարենը մենք տեսնում ենք, որ բաբելացիներն արշավանք են կատարում դեպի Հայկական լեռնաշխարհի մատույցներ՝ հեռահար նպատակ ունենալով զարգացնելու իրենց առաջխաղացումը, բայց բախվում են ինչ-որ ուժերի հետ և ետ վերադառնում:

Հաջորդ՝ մ. թ. ա. 607 թ. կամ Նաբու-ապլա-ուծուրի կառավարման 19-րդ տարում, բաբելացիները կրկին Նաբու-ապլա-ուծուրի և գահաժառանգ Նաբու-կուդուրի-ուծուրի գլխավորությամբ արշավի են ելնում: Արձանագրության այն հատվածները, որտեղ խոսվում է բաբելացիների մղած մարտերի ու ավարի մասին, վնասված են և հիշատակվող տեղանունը միանշանակորեն չի վերականգնվում:

Տարրնթերցումների տեղիք է տալիս մասնավորապես արձանագրության 11-րդ տողը՝ «iġ-[tab]-ta EN pi-ġat KUR[...](?)..gi-mi]-ir KUR^{me} ik-šú-ud» - «նա նվաճեց բոլոր լեռները (լեռնային տարածքները) մինչև [...](?)...»¹⁷: Ա. Բ. Գրեյսոնն ու Զ.-Զ. Գլասսները վնասված հատվածը վերականգնում են որպես «Úraštú»՝ Ուրարտու¹⁸: «Ուրաշ/րտու» վերականգնման առումով Ի. Մ. Դյակոնովը նշում է, որ երկրանունը, ամենայն հավանականությամբ, սկսվում է Pi կամ Ru-/Šub- վանկերով¹⁹: Իսկ Զ. Ռիդն առաջարկում է վերականգնել «tam-[tim](?)»՝ մինչև «Տովի (ըստ հեղինակի Վանա լճի շրջան)»²⁰: Անկախ այն հանգամանքից, թե որ վերականգնումն է համապատասխանում իրականությանը, միևնույնն է, բոլոր դեպքերում էլ մենք

13 ^dAG.IBIL.ŠEŠ (m^aNabū-āpla-ūsur) - Նաբուպալասար (մ.թ.ա. 626-605 թթ.)

14 Աքքադական Elul ամսվա շումերագիրը՝ համապատասխանում է օգոստոս-սեպտեմբեր ամիսներին: 15 ABC, Chron. 4; GMC, Chron. 23; Дьяконов И. М., Малая Азия и Армения ... с. 39-46 [D'yakonov I. M., Malaya Aziya i Armeniya ... s. 39-46]; Ցականյան Ռ., Նաբոպալասարի (Ք. ա. 626-605 թթ.) կառավարման 18-րդ տարին..., էջ 13-14 [Tsakanyan R., Nabopalasari (K'. a. 626-605) t't. kařavarman 18-rd tarin, p. 17]:

16 Տես Ցականյան Ռ., Նաբոպալասարի (Ք.ա. 626-605 թթ.) կառավարման 18-րդ տարին..., էջ 28, տես նաև էջ 29-ի քարտեզը [Tsakanyan R., Nabopalasari (K'. a. 626-605) t't. kařavarman 18-rd tarin, ej 28, tes naev p. 29-i k'qartezaj]:

17 Նշված տողի թարգմանությունն ու մեկնաբանությունը մանրամասն տես Ցականյան Ռ., Նաբոպալասարի (Ք. ա. 626-605 թթ.) կառավարման 18-րդ տարին..., էջ 25-27 [Tsakanyan R., Nabopalasari (K'. a. 626-605) t't. kařavarman 18-rd tarin, pp. 25-27]:

18 Տես ABC, Chron. 4, II; GMC, Chron. 23, II.

19 Տես Дьяконов И. М., Малая Азия и Армения ... с. 39, прим. 49 [D'yakonov I. M., Malaya Aziya i Armeniya ... p. 39, prim. 49].

20 Reade J. E., Why did the Medes Invade Assyria?, History of the Ancient Near East, Monographs - V (yujunhtnⁿ HANE, M/V), Continuity of Empire(?): Assyria, Media, Persia, Ed. G.B. Lanfranchi, M. Roaf, R. Rpllinger, Padova, 2003, p. 154f.; Ցականյան Ռ., Նաբոպալասարի (Ք.ա. 626-605թթ.) կառավարման 18-րդ տարին..., էջ 26-27 [Tsakanyan R., Nabopalasari (K'. a. 626-605) t't. kařavarman 18-rd tarin ..., pp. 26-27]:

գտնվում ենք Հայկական լեռնաշխարհում:

Ընդհանրացնելով վերոշարադրյալը՝ ստացվում է հետևյալ պատկերը. բաբե-
լոնյան գորքերը ասուրա-բաբելական հակամարտության ժամանակաշրջանում առն-
վազն երեք արշավանք են կատարել դեպի Հայկական լեռնաշխարհի սահմանամերձ
շրջաններ:

Ստորև ներկայացնում ենք այդ արշավանքների ժամանակագրությունը՝

ա) մ.թ.ա. 609 թ.՝ դեպի Իզալայի շրջան,

բ) մ.թ.ա. 608 թ.՝ դեպի Բիթ-Խանունիա, և

գ) մ.թ.ա. 607 թ.՝ դեպի Ուրաշ/րտուի ինչ-որ շրջան կամ դեպի Վանա լճի
ավազան:

Քննարկվող թեմայի վերաբերյալ սեպագիր-աղբյուրագիտական նյութն այսքանով
սահմանափակվում է, և վերջինիս շրջանակներից դուրս բոլոր եզրակացությունները
ենթադրությունների ոլորտից են:

2. Հայ միջնադարյան պատմիչների հիշատակությունները Ասորեստանի անկման մասին

Հայ վաղ միջնադարյան ու միջնադարյան այն պատմիչները, որ իրենց երկերում
ներկայացրել են նախապատմական շրջանի Հայոց պատմությունը, հաճախ կրկնելով
Մովսես Խորենացուն՝ անդրադարձ են կատարել նաև Ասորեստանի անկմանն ու
հայերի մասնակցությանն այդ գործընթացում: Դեռ ավելին, հայ մատենագիրների
մոտ Հայկական թագավորության առաջացումն անմիջականորեն աղերսվում է հենց
Ասորեստանի անկման գործընթացի հետ:

Խոսելով թագավորության առաջացման մասին՝ Մովսես Խորենացին հիացմուն-
քով նշում է.

**«Եւ այժմ ահա զուարճացայց, ոչ փոքր ինչ կրելով խնդութիւն, հասնելով
խտեղիս, յորում մերոյ իսկ բնիկ նախնոյն սերունդք ի թագաւորութեան հասնեն
յաստիճան»²¹:**

Հիմնախնդրի լուսաբանման առումով շատ հաճախ շրջանցելով համաժամա-
նակյա սեպագիր-աղբյուրագիտական նյութի թելուզն փոքրաթիվ հիշատակություն-
ները՝ ուսումնասիրողների կողմից կարևորվել են հատկապես հայ մատենագիրների
վկայությունները: Ընդ որում՝ կարծրացած է այն պատկերացումը, որ Մովսես Խո-
րենացուց հետո ապրած և իրենց «Պատմությունները» շարադրած մյուս հայ պատ-
միչները՝ Սեբեոսը, Թովմա Արծրունին և այլք, իրենց պատմության նախաբանում
կամ առաջին գլխում, որտեղ շարադրվում է հայ ժողովրդի պատմությունը սկզբից
մինչև նրանց ապրած ժամանակաշրջանը, օգտվել են Խորենացուց կամ պարզապես
կրկնել են նրան: Սակայն նյութի խորագնին ուսումնասիրության և պատմիչների
հաղորդումների համադրման արդյունքում վերոհիշյալ կարծիքը չի հաստատվում²²:

3. Ասորեստանի անկման ու Հայոց թագավորության առաջացման «մարական» ու «բաբելական» տարբերակները

Այսպես, պատմահայր Մովսես Խորենացին արձանագրում է, որ Պարոյրը՝ «որդի
Սկայորդոյ», հայկական ուժերի գլուխն անցած, մարական գորքերի հետ համատեղ,
ակտիվ մասնակցություն է ցուցաբերել Ասորեստանի դեմ պայքարում և շուտով
հանդես բերած իր պատրաստակամության դիմաց Մարաստանի թագավոր

21 Մուսիսի Խորենացույ Պատմութիւն Հայոց, I, ԻԷ, էջ 64-65 [Movsisi Khorenacvo Patmut'ywn Hayoc, I, IA, pp. 64-65]:

22 Տես Ցականյան Ռ., Թովմա Արծրունու նորբաբելոնյան արքայացանկը և նրա աղբյուրը, Էջմիա-
ծին, Ե, 2010, էջ 61-71 [Tsakanyan R., T'ovma Arc'rwnew norbabelonyan arkayac'ankə ev nra axbywə, Էջմիա-
ց, 2010, pp. 61-71]:

Վարբակես-Կիաքսարից.

«Յինքն և զբաջն մեր նախարար յանգուցանէ զՊարոյր, թագաւորութեան շուք և ձև նմա խոստանալով ... և այսպէս զթագաւորութիւնն ի Սարդանապալայայ ինքն առեալ՝ տիրէ Ասորեստանի և Նինուէի: Բայց վերակացու զայս թողլով Ասորեստանի՝ փոխէ զթագաւորութիւնն ի Սարս»²³:

Պատմահոր այս հիշատակությունը ուսումնասիրողների կողմից տարբեր գնահատականների է արժանացել, սակայն մեկ հանգամանք փաստ է. ըստ Խորենացու հիշատակության՝ Պարոյրը հայկական առաջին թագավորության հիմնադիրն է: Որպես իր խոսքի հաստատում Պատմահայրը նշում է.

«Եւ զի արդարև զայնու ժամանակաւ էր ազգիս մերոյ թագաւորութիւն՝ վկայէ և Երեմիա²⁴ մարգարէ ի բանս իւր, հրաւիրելով ընդդէմ Բաբելոնի ի պատերազմ. «Հրաման տուր, ասէ, Այրարատեան թագաւորութեանն և Աքանազեան գնդին»: Եւ այս հաւաստի գոլոյ մերոյ թագաւորութեանն առ այնու ժամանակաւ»²⁵:

Այստեղ հետաքրքիր է ևս մի հանգամանք. Խորենացին ընդգծում է, թե այս պատումն ունի նաև այլ տարբերակներ.

«Այլ այս եթէ առ այս այլազգաբար պատմի՝ մի ինչ սքանչանար»²⁶:

Այսպիսով, Խորենացին ինքն է արձանագրում, որ իր ձեռքի տակ եղել են բազմապիսի աղբյուրներ, որոնցից շատերին Պատմահայրը հղում է տալիս: Սակայն ինչպես երևում է, Խորենացին քննադատաբար է մոտեցել իր աղբյուրներին, դեռ ավելին, նրանցից գատել այն, որն ավելի ճշմարտացի է համարել՝

«... եթէ բազում ազգաց լեալ մատենագիրք, որպէս ամենեցուն է յայտնի, մանաւանդ Պարսից և Քաղդէացոց, յորս առաւել ազգիս մերոյ գտանին բազում ինչ իրաց յիշատակք, մեք զՅունացն միայն յիշեցաք զպատմագիրս, և անտի զյայտարարութիւն մերոյ ազգաբանութեանս խոստացաք յանդիման կացուցանել»²⁷:

Ինչպես երևում է Խորենացու իսկ հիշատակությունից, նա նախապատվությունը հիմնականում տվել է հունական աղբյուրներին: Վերջինից էլ պետք է բխեցվի նաև Խորենացու՝ Ասորեստանի անկման գործընթացում մարերին նախապատվություն տալը: Վերոշարադրյալից կարելի է ենթադրել, որ նրա ձեռքի տակ եղել են նաև այնպիսի աղբյուրներ, որոնցում Ասորեստանի կործանման պատմությունը դիտարկված է եղել Բաբելոնիայի տեսանկյունից: Առավել ևս, որ դրա օգտին է վկայում Պատմահոր հետևյալ արտահայտությունը.

«Քանզի և որք ի հօրէն Նաբուզոդոնոսորայ գործք, գրեցան յիրեանց

23 Մուսիսի Խորենացույ Պատմութիւն Հայոց, I, ԻԱ, էջ 65 [Movsisi Khorenacvo Patmutywn Hayoc, I, lap. 65]: Մինչդեռ Թովմա Արծրունին Պարոյր Հայկազնին չի ծանաչում որպես առաջին թագավոր՝ «Վարբակայ Սարի բարձեալ գիշխանութիւնն Ասորեստանեայց՝ զՊարոյր Հայկազնեայ ապահարկէ ի հարկաբարձութենէ և թագապատիւ իշխանութեամբ մեծարեալ՝ տայ զօր բազում յօգնականութիւն, և դարձեալ հաստատէ զթագաւորութիւն Հայոց», Թովմայի Վարդապետի Արծրունոյ Պատմութիւն տանն Արծրունեաց, թարգմ. և ծնթգր. Վ. Մ. Վարդանյանի, Եր., 1985, I, Գ, էջ 58 [T'ovmayi Vardapeti Arc'runvoj Patmutivn tann Art'runec', targm. ev c'nt'gr. V. M. Vardanyani, Yer., 1985, I, D, p. 58]: Այսինքն՝ պետություն որպես այդպիսին չի առաջանում, ինչպես հիշատակում է Պատմահայրը, այլ ըստ Թովմա Արծրունու՝ ճանաչվում է, կամ վերականգնվում է:

24 Տես Երեմիայի մարգարեությունը 51: 27-29 [Yeremiasyi margareut' ywnə 51:27-29]:

25 Մուսիսի Խորենացույ Պատմութիւն Հայոց, I, ԻԲ, էջ 67 [Movsisi Khorenacvo Patmut'ywn Hayoc, I, IB, p. 67]:

26 Մուսիսի Խորենացույ Պատմութիւն Հայոց, I, ԻԱ, էջ 66 [Movsisi Khorenacvo Patmut'ywn Hayoc, I, IA, p. 66]: Խորենացին մեղադրում է նաև իր նախորդներին, որոնք հոգ չէին տարել հիշատակություններ թողնելու համար՝ «... զի եթէ որք յառաջ քան գմեզ և կամ առ մեծք եղէն հարուստք և իշխանք աշխարհիս Հայոց, ոչ ընդ՝ ձեռամբ անկելոց իրեանց արդեօք գտելոց իմաստնոց զայսպիսեացս հրամայեցին կարգել գիշատակս բանից, և ոչ արտաքուստ ուստեք այսոցիկի՝ ներքս անել խորհեցան օժանդակութիւնս իմաստից» I, Ա, էջ 6:

27 Մուսիսի Խորենացույ Պատմութիւն Հայոց, I, Բ, էջ 7 [Movsisi Khorenacvo Patmut'ywn Hayoc, I, B, p. 7]:

յիշողութեանցն վերակացուաց...»²⁸:

Այստեղ եզրակացությունն ավելի քան միանշանակ է, որ Պատմահայրն իր ձեռքի տակ եղած երկու աղբյուրների միջև նախապատվությունը տվել է «**մարական**» տարբերակին՝ Ասորեստանը կործանողի և հայոց առաջին արքային թագադրողի դերը վերապահելով ոչ թե Նաբու-ապլա-ուծուր/Նաբուպալասարին կամ Նաբու-կուդուրի-ուծուր (Նաբուգոդոնոսորին), այլ «Վարբակ»-Կիսբասարին: Սակայն ակնհայտ է նաև, որ Խորենացին իր ձեռքի տակ ունեցել է նաև «**բաբելական**» տարբերակը:

Հաջորդ հայ պատմիչը, որն անդրադարձել է վերոհիշյալ թեմային, Սեբեոսն է: Նրա հիշատակությունները, սակայն, ավելի շուտ հակասում, քան թե համընկնում են Մովսես Խորենացու վկայություններին: Ինչպես տեսանք, Պատմահայրը Հայաստանի տվյալ ժամանակաշրջանի պատմությունը և Հայոց թագավորության հաստատումը կապում է Մարաստանի հետ, մինչդեռ Սեբեոսը՝ Բաբելոնի: Դեռ ավելին, Սեբեոսի մոտ Պարոյրի փոխարեն հանդես է գալիս **Փառնաւազը**²⁹: Վերջինս, ըստ Խորենացու, հայոց նահապետների ցուցակի, Պարոյրի թոռն է³⁰:

Անդրադառնալով ժամանակաշրջանի իրադարձություններին՝ Սեբեոսը նշում է.

«Այս Փառնաւազ հնագանդեալ Նաբուգոդոնոսորայ արքայի ի Բաբելոն: Եւ ապա յայնմհետէ Բաբելացոց և Մարաց թագաւորքն տիրեցին մինչև ցԱղեքսանդր Մակեդոնացի...»³¹: Մինչ Փառնավազի մասին հիշատակությունը Սեբեոսը նշում է, որ Հայաստանին Շամիրամի տիրելուց հետո՝

«... յայնմհետէ Ասորեստանեայց թագաւորքն տիրեցին մինչև ցմեռանելն Սենեքարիմայ. Ապա ապատամբեցին յԱսորոց թագաւորացն ծառայութենէ: Եւ տիրէ ի վերայ նոցա Զարեհ որդի որդւոց Արամենակայ, ... ապա Արմոզ. ապա Սարհանգ. Ապա Շաւաշ. Ապա Փառնաւազ»³²:

Վերոշարադրյալից հետո Սեբեոսը ներկայացնում է Փառնավազի սերունդներին՝ տեղորոշելով նաև նրանց տիրապետության սահմանները, որոնք համընկնում են Հայկական լեռնաշխարհի հարավարևմտյան շրջաններին՝ Մեծ Հայքի Աղձնիք և Ծովք նահանգներին՝

«Սա (Փառնավազը – Ռ.Յ.) ծնաւ զԲագամ և զԲագարատ. և Բագարատ ծնաւ զԲիրատ, և Բիրատ ծնաւ զԱսպատ: Եւ որդիքն Բագարատայ ժառանգեցին զժառանգութիւնս իւրեանց ի կողմանս արևմտից, այս ինքն է Անգեղ տուն. վասն զի կոչեցաւ Բագարատ և Անգեղ...»³³:

Այստեղ մեծ հետաքրքրություն է ներկայացնում այն հանգամանքը, որ, ըստ Սեբեոսի, Նաբու-կուդուրի-ուծուրին հնագանդված Փառնավազի տիրոջները համապատասխանում են Իզալայից հյուսիս ընկած տարածքներին և Բիթ-Խանունիային: Սեպագիր աղբյուրն այս պարագայում ոչ միայն համահունչ է Սեբեոսի հիշատակությանը, այլև համադրվում է նաև ժամանակագրական առումներով:

28 **Մուսիսի Խորենացու** Պատմութիւն Հայոց, I, ԻԱ, էջ 66 [Movsisi Khorenacvo Patmut'yn Hayoc, I, IA, p. 66]:

29 Տե՛ս **Պատմութիւն Սեբէոսի**, աշխատասիրությամբ Գ. Վ. Աբգարյանի, Եր., 1979, Ա: 30, էջ 51 [Patmutivn Sebeosi, ashkhatasirutyamb G. V. Abgaryani, Yer., 1979, A: 30, p. 51]: Մովսես Խորենացու և Սեբեոսի հայոց նահապետների ցանկերի համադրման համար մանրամասն տես՝ **Հակոբյան Հ.**, Տիգրան Մեծը և Հայկազունիները համաձայն Խորենացու և Սեբեոսի, Հայկազունիներ, 2013, էջ 43-44, Հավելված Գ. 2 [Hakobyan H., Tigran Metsy ev Haykazuninery hamadzyan Khorenatsu ev Sebeosi, Haykazuniner, 2013, pp. 43-44, havelvats G. 2]:

30 Տե՛ս **Մուսիսի Խորենացու** Պատմութիւն Հայոց, I, ԻԲ, էջ 68-69 [Movsisi Khorenacvo Patmut'yn Hayoc, I, IB, pp. 68-69]:

31 **Պատմութիւն Սեբէոսի**, Ա: 30, էջ 51 [Patmutivn Sebeosi, A: 30, p. 51]:

32 **Պատմութիւն Սեբէոսի**, Ա: 20-25, էջ 51 [Patmut'yn Sebeosi, A: 20-25, p. 51]: Կարծում ենք նաև, որ հաջորդ Բ գլխում կապված Արշակ արքայի և Մծուրնի պատմության մեջ հիշատակված «**Բագարատն Փառազեան**»-ը պետք է սրբագրվի որպես «**Բագարատն Փառնաւազեան**» (**Պատմութիւն Սեբէոսի**, Բ: 5, էջ 54 [Patmut'yn Sebeosi, B: 5, p. 54]), այստեղ պարտադիր չէ Բագարատին տեսնել որպես Փառնավազի որդի, այլ որպես Փառնավազյան տոհմից:

33 **Պատմութիւն Սեբէոսի**, Ա: 25-30, էջ 51 [Patmut'yn Sebeosi, A: 25-30, p. 51]:

Դեռ ավելին, ինչպես վերը նշվեց, բաբելոնյան զորքերը Հայկական լեռնաշխարհում մարտեր էին մղում հենց Բաբելոնիայի ապագա թագավոր՝ գահաժառանգ Նաբու-կուդուրի-ուծուր (Նաբուգոդոնոսոր – Ռ. Ց.) II-ի (մ. թ. ա. 605-561 թթ.) գլխավորությամբ: Անչափ կարևոր հանգամանք, որը վրիպել է տվյալ ժամանակաշրջանի Հայոց պատմությունն ուսումնասիրողների տեսադաշտից: Մինչդեռ երևույթի քննությունը համալիր ուսումնասիրման կարիք ունի, անհրաժեշտ է, որ այն համահունչ լինի ոչ միայն ժամանակագրական առումով և ընդգրկվի այս կամ այն իրադարձության համատեքստում, այլև հաստատվի աղբյուրագիտական տվյալներով: Այս պարագայում ենթադրական եզրակացությունները կարող են և տեղավորվել տվյալ ժամանակահատվածի իրադարձությունների հիմքում:

Իսկ ինչ վերաբերում է Սեբեոսի այն հիշատակությանը, որ բաբելոնցիներից հետո «...Մարաց թագաւորքն տիրեցին մինչև ցկեքսանդր...», ապա այստեղ պատմիչը կարող է և նկատի ունենար Պարսից Աքեմենյան տերությունը, որովհետև մ. թ. ա. 550 թվականից հետո մարերը չէին կարող տիրել մինչև Ալեքսանդր Մակեդոնացի:

Մ. թ. ա. 550 թ. Պարսից տերությունն առաջացման պահից ի վեր սկսեց վարել ակտիվ նվաճողական քաղաքականություն: Երկար ժամանակ պատմագրության մեջ տիրում էր այն տեսակետը, որ մ. թ. ա. 547 թ. Կյուրոս II Մեծը (մ. թ. ա. 550-529 թթ.) արշավանք է կազմակերպում դեպի Լիդիա և նվաճում այն³⁴: Կյուրոս II-ի այս արշավանքի վերաբերյալ տեղեկություն է պահպանվել Բաբելոնի թագավոր Նաբունայիդի (Նաբոնիդի) (մ. թ. ա. 556-539 թթ.) ժամանակագրությունում, որտեղ, սակայն, վնասված է անվանումն այն երկրի, ում դեմ արշավում էր պարսից արքան՝

«15. *ina ITI.BÁR*³⁵ 'Ku-raš šár KUR.Par-su ÉRIN-šú id-ke-e[m]ja
16. *šap-la-an URU.Ar-ba-'il 'IDIGNA i-bir-ma ina ITI.GU*³⁶ ana KUR.[. . .]-u [. . . il-li]k

17. LUGAL-šú GAZ bu-šá-a-šú il-qi šu-lit šá ram-ni-šú <<aš>>(?) lu ú-še-li [. . .]
18. EGIR šu-lit-su ú šar-ri ina ŠÁ GÁL³⁷ ([. . .])»

«15. Նիսանու ամսին Պարսու երկրի արքա Կուրաշը հավաքեց իր զորքը 16. և Արբելայից ներքև հասեց Տիգրիսը: Այյարու ամսին նա շարժվեց [. . .] երկրի դեմ,

17. սպանեց նրա արքային, վերցրեց նրա ինչքը (և) այնտեղ թողեց իր կայազորը [. . .]:

18. Հետո արքան և իր կայազորը մնացին այնտեղ ([. . .])»³⁷:

Մոտ կես դար առաջ Զ. Քարջիլը, ուսումնասիրելով արձանագրության վնասված մասը, եկավ այն եզրակացության, որ նրա պահպանված մասում ոչ մի բան չի ասվում Կյուրոսի դեպի Լիդիա կատարած արշավանքի մասին, քանի որ քննարկվող մասը ջարդված է, և պահպանվել է միայն մի նշան, այն էլ՝ թերի վիճակում: Նա հավանական է համարում, որ խոսքը վերաբերում է Փոքր Ասիայի արևելքում գտնվող մի այլ երկրի³⁸: Նախկինում այն վերականգնվում էր որպես ^{ma}Lú-ú-di³⁹, իսկ վերջերս Ց. Էլսների կողմից առաջարկվեց այդ երկրանունը կարդալ ^{ma}Ú-ra-áš-tu⁴⁰: Ց. Էլսները, մեկ անգամ ևս ուսումնասիրելով արձանագրությունը, եկավ այն եզրակացության,

34 Տե՛ս Дандамаев М. А., Политическая история Ахеменидской державы, М., 1985, с. 23. [Dandamaev M. A., Politicheskaya istoriya Akhemenidskoy derzhavy, M., 1985, p. 23]; Curtis J., The Assyrian Heartland in the Period 612-539 B. C., HANE, M/V, p. 166; հմմտ. սակայն՝ Reade J., Why did the Medes invade Assyria?, p. 155, այլք:

35 Աքքադական Nisan ամսվա շումերագիրը՝ համապատասխանում է մարտ-ապրիլ ամիսներին:

36 Աքքադական Iyay ամսվա շումերագիրը՝ համապատասխանում է ապրիլ-մայիս ամիսներին:

37 ABC, Chron. 7, Col. II, ll. 15-18; GMC, Chron. 26, Col. II, ll. 15-18; Cargill J., The Nabonidus chronicle and the fall of Lydia, American Journal of Ancient History, 1977, v. 2, pp. 97-116.

38 Տե՛ս Cargill J., The Nabonidus chronicle and the fall of Lydia, p. 104f.

39 ABC, Chron. 7, Col. II, l. 16; GMC, Chron. 26, Col. II, l. 16.

40 Oelsner J., Review of R. Rollinger, Herodots Babylonischer Logos (Innsbruck, 1993), Archiv für Orientforschung, 1999/2000, № 46/47, S. 378-380.

որ երկրանունը սկսվում է, ոչ թե «ԼՍ» վանկով այլ «Ս» հնչյունով⁴¹: Այս վերականգնումն ընդունվեց մի շարք մասնագետների կողմից⁴²:

Ելնելով վերոշարադրյալից՝ Ռ. Ռոլլինգերը եզրակացնում է, որ մարական ուժի դյուրաբեկությունը արևմուտքում և Սարական տերության արևմտյան սահմանը (ներառելով Հալիս գետը) հաշվի առնելով, թվում է, թե Ուրարտուն⁴³ հաղթահարել է մարական «փուլը» և նվաճվել Կյուրոսի կողմից մ. թ. ա. 547 թ.⁴⁴:

Այսպիսով, ակնհայտ է, որ սկսած Պատմահայր Խորենացուց՝ հայ պատմիչների համար Ատրեստանի անկման պատմությունն առանցքային նշանակություն է ունեցել, և մ. թ. ա. VI դարի Հայոց պետության առաջացումն անմիջականորեն առնչվում է այդ իրադարձությանը: Ակնհայտ է նաև, որ Խորենացին ձեռքի տակ եղած բազմաթիվ աղբյուրների մեջ Ատրեստանի անկման վերաբերյալ ունեցել է երկու տարբերակ՝ «մարական» ու «բաբելական»: Սակայն ամենայն հավանականությամբ հունաբան դպրոցի ազդեցությամբ նախապատվությունը տրվել է առաջին՝ «մարական», տարբերակին: Խորենացուց հետո միջնադարյան հայ պատմիչների համար, բացառությամբ Սեբեոսի, նրա պատումը ծառայել է որպես հիմնական աղբյուր: Իսկ Սեբեոսի պատումի համար, հիմք է հանդիսացել կամ Խորենացու հիշատակած ու մեզ չհասած «բաբելական», կամ մեկ ուրիշ աղբյուր:

Ռուսլան Ա. Ցականյան – գիտական հետաքրքրությունների ոլորտն ընդգրկում է Հին Առաջավոր Ասիայի ու Հայկական լեռնաշխարհի երկրների ու պետական կազմավորումների պատմության ու մշակույթի տարբեր բնագավառները: Հրատարակել է շուրջ երկու տասնյակ գիտական հոդված:

Summary

THE VERSIONS OF KHORENATSI AND SEBEOS ON THE FALL OF ASSYRIA

Ruslan A. Tsakanyan

Key words – Assyria, Babylon, Urartu, Armenian Highland, Movses Khorenatsi, Sebeos, Sophera, Aïdznik, Nebuchadnezzar II

In this article an attempt is made (on the basis of the “Babylonian Chronicles” and Armenian medieval historians Movses Khorenatsi and Sebeos) to restore political situation in the Armenian Highland at the end of VII century B.C. In his monumental work M. Khorenatsi mainly preferred Greek sources. Hence originates the “Median” version of the fall of the Assyrian state. But M. Khorenatsi obviously possesses with other sources also, according to which the fall of Assyria was considered from the point of view of Babylon. Moreover, M. Khore-

41 *Ibid.*, S. 379.

42 St'iu **Rollinger R.**, The Median “Empire”, the End Urartu and Cyrus the Great Campaign in 547 B. C.: (Nabonidus Chronicle II, 16), In *Ancient West and East*, Tehran, 2008, № 7, p. 53; **Stronach D.**, The Campaign of Cyrus the Great in 547 BC.: A Hitherto Unrecognized Source for the Early History of Armenia?, *Aramazd. Armenian Journal of Near Eastern Studies*, 2007, № 2, pp. 163-165, 168-171.

43 Այս պարագայում, ամենայն հավանականությամբ, մ.թ.ա. VI դարի Հայկազունիների հայկական թագավորությունը:

44 St'iu **Rollinger R.**, The Median “Empire”, p. 56.

natsi himself does not deny the existence of this fact – “For the deeds of the father Nabuchadnezzar were written down by the supervisors of their annals ...”. Here the conclusions are more than clear: under the hand of M. Khorenatsi there were two versions according to which the first Armenian king was crowned not by Nabopalassar or Nebuchadnezzar, but by the Midian king “Varbakes”–Суахаes. And in the study of Sebeos we meet only the “Babylonian” version, where the above mentioned events are bound to Babylonia. The records of Sebeos are similar to the “Babylonian Chronicles”. Of the latter, we know that during the Assyrian–Babylonian conflict (626–605 B.C.), the Babylonian army, led by King Nabopalassar and Nebuchadnezzar, the heir to the throne, appeared at least three times on the borders of the Armenian Highland. Perhaps they moved further into the highlands – in 609 B.C. in the Izalla area, in 608 B.C. in Bet–Hanuniya and in 607 B.C. “to the district of Uraš/rtu” or “to the district of Sea (in the basin of Lake Van or Lake Hazar (?))”.

Резюме

ВЕРСИИ ХОРЕНАЦИ И СЕБЕОСА О ПАДЕНИИ АССИРИИ

Руслан А. Цаканян

Ключевые слова – Ассирия, Вавилон, Урарту, Армянское нагорье, Мовсес Хоренаци, Себеос, Цопк, Ахдзник, Навуходоносор II.

В этой статье сделана попытка (на базе «Вавилонских хроник» и свидетельств средневековых армянских историков Мовсеса Хоренаци и Себеоса) восстановить политическое положение на Армянском нагорье в конце VII века до н.э. В своем монументальном труде М. Хоренаци в основном отдавал предпочтение греческим источникам. Отсюда и берет начало «Мидийская версия» о падении Ассирийского государства. Но под рукой М. Хоренаци явно находились и другие источники, согласно которым падение Ассирии рассматривалось с точки зрения Вавилона. Более того, сам Хоренаци не отрицает существование этого факта – «Ибо деяния отца Навуходоносора были записаны их хранителями памятных записей ...». Здесь выводы более чем однозначны: под рукой М. Хоренаци были две версии, согласно которым первого армянского царя короновал не Набопаласар или Навуходоносор, а мидиец «Варбакес» –Киаксар. А у Себеоса мы встречаем только «Вавилонский вариант», где приведенные выше события связаны с Вавилоном. Сообщения Себеоса сходны и с «Вавилонскими хрониками». Из последних мы узнаем, что во время ассиро–вавилонского конфликта (626–605 гг. до н.э.) вавилонское войско, во главе которого стоял царь Набопаласар – наследник трона Навуходоносора – по крайней мере три раза появлялось на подступах к Армянскому нагорью, возможно, они продвигались и в глубь нагорья – в 609 г. до н.э. в район Иццалы, в 608 г. до н.э. в Бит–Хануния и в 607 г. до н.э. «до области (города) Ураш/рту» или «до области моря (в бассейне оз. Ван или оз. Хазар(?))».